

Պարսկաստանի դործարաններուն համար կը պահուի: Սփիւյն, Մաղանտքանինը եւ Աս- դարապատինը հաղուադէպօրէն կամ բնաւ եր- բեք կ'արտածուի: Եիրվանէն իրենց բոլոր մե- տաքսը նախապէս Թուրքիա եւ Ռուսիա կը զրկէին: Գիւանի գիւղացիները, նկատելով որ Անգլիացիք կարճ փաթթուած (մետաքսի) տեղ չէր պահարաստէին, եւ մետաքսը լաւ կ'ըլլար ու մեր դործատէրերէն շատ կը գնահատուէր: Ա- սիկա պատճառ եղաւ, որ գիւղացիները երկար փաթոյթով մետաքսը ընտրեն: Խոնաւ կլիմա- յի տակ մեծ անիւով փաթթուած մետաքսը:

Թուրքիոյ «չորպասին» Հանուէյի «չար- պաֆ»ն է, զոր կը նոյնացնեն Գէորգ զպիւր Պալատեցւոյ իր Պարսկահայ մեծարժէք բա- ռարանին մէջ գործածած «չէրպէթի»ն հետ, որ է «տեսակ իմն յոյժ նուրբ ոստայնակիալ պատառի»:

Հանուէյի «արապսին» հաւանարար Սիւ- բիական մետաքս մըն է:

Թուրքիոյ «արապսին»ն, ըստ իս, նոյն այն մետաքսն է, որ Մարսիլիոյ գիւանա- թուղթերուն մէջ յաճախ կը յիշուի «soies ardasses», որ, ըստ իս, պէտք է վերծանել Ա- րաչ աւանէն եկած մետաքս: Արաչ, Արաս կամ Վարաս այժմու Սալզան, Եիրվանի մաս կը կազմէր: Արաչի մետաքսին անունը կրնայ նաեւ հին հայ Արցախէն ծագած ըլլալ, որոն մետաքսն էր, որ համանուն աւանը կը հաւաք- ուէր՝ անկէ արտածուելու համար հայ վաճա- ռականներէ, մանաւանդ ԺԶ-ԺԷ դարերուն:

Հարիս ալ կուտայ տարբեր մետաքսներու անուններ: «Առաջին տեսակը Պարսկաստանի մէջ Եիրվանի կոչուածն է, որ մենք Եւրոպայի մէջ Հարտաս կը կոչենք: Երկրորդը կը կոչ- ուի Քարպարի, որ մենք սովորաբար Լէկի (Legee, Legy) կը կոչենք, Գիւանի Լէկիան (Leciam) փոքր քաղաքին անուամբ, ուրկէ կը բերուի անոր մեծագոյն մասը: Երրորդը՝ այդ (Պարսիկ) լեզուով Քէզ-Սոտա-Բէնչէտ, կամ արհեստաւորի մետաքս կոչուածն է: Յետոյ մեր եւ անոնց Եչրպաֆը կոչածը, կամ հասա- բակօրէն (անգլիացի) ժողովուրդէն Թուրքիոյ մետաքս կոչուածն է», նախ Թուրքիայէն Անգ-

լիա բերուած ըլլալուն համար:

Հարտասը «արտաչին» է, իսկ «չէրպաֆը»ը սովորաբար «չէրպէֆը» կոչածնին է, առանց ծագման մասին խօսեցանք: Լէկի մետաքսը, որ իրր թէ Գիւանի Լէկիան գիւղէն կուգայ եւ ատոր համար այդպէս կը կոչուի, ըստ իս, պարզապէս նոյնն է Մարքօ Բօլօի յիշած «կէ- լէ» կամ «գելէ» մետաքսին հետ, որոնք աղա- ւաղումներն են Գիւան ձեւին: Ինձ բնաւ ծանօթ չէ Լէկիան գիւղի մը գոյութիւնը: Ըստ իս՝ Լե լատին նախագիր յօդն է, որ աղաւաղուել է Գիւանին խոնուելով եւ այդ Լէկին կազմեր: (Le Gilan)

Քարպարի մետաքսը, չեմ գիտեր թէ, ի՞նչ տեսակ մետաքս է: Սակայն, բառը, ըստ երեւոյթի, պարսիկ «խառվար»էն է ծագած, որ «խաբեռ» կը նշանակէ: Չեմ կարծեր, որ մետաքսի տեսակը կոչուի իշու բեռ մը եղած ըլլալուն համար: Հարիսի տեղեկութիւնը սխալ ծանօթութեան վրայ հիմնուած կ'երեւայ:

Կայ նաեւ «Մահմէտան» կոչուած մետաք- սը, որ նոյն անուամբ շրջանին արտադրուելին կը նկատեն:

Իվլիա Չէլչպի իր ուղեգրութեան մէջ կը խօսի Մահմուտապատի շրջանի մասին 200 ա- ւաններով, ուրկէ 1000 հակ մետաքս կ'ըլլայ տարեկան: «Մահմէտան» մետաքսը այն- քան հակամէտ չէ կպչելու կամ իրարու հետ ձիւթանալու: Այն կողմերը, ուր ձողե- րու կամ անիւի մը բաժանմանց վրայ կը մնայ (խողակէն քակուած մետաքսը), ան յաճախ կը սենայ եւ այնքան կը կարծրանայ, որ չէ կա- րելի առանց մեծ դժուարութեան բաժնել: Ա- նոնք մեծ անիւով աւելի արագ կը գործեն: Սակայն, ցարդ անոնք չեն նկատած (հիւսելու) արտադրութեան համար քակելու անյարմա- րութիւնը: Այս գիւղացիները մետաքսի գնի մասին ծայրայեղօրէն յամառ են: Իրենց ա- ռեւտուրը կը կատարուի ընդհանրապէս միջ- նորդներու միջոցաւ: Սակայն, գնորդը կը վը- ճարէ դրամը (միջնորդին): Փոքր քանակու- թեամբ կը ծախեն, որով միշտ նաւարեռ մը կարելի չէ ունենալ: Այս անպատեհութիւննե- րէն զատ, կեղծ դրամի անպատեհութիւնն ալ կայ, որովհետեւ անոնք յաճախ ստիպուած են